ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«11» հունիսի 2018 թվականի № 63-Հ

ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻՆ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի թիվ 272-Ն որոշման պահանջների և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 6-ի թիվ 02/41.3/9003-18 հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար որպես պատասխանատու անձինք նշանակել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) աշխատակազմի իրավաբանական վարչության դատահիրավական բաժնի գլխավոր մասնագետ Լիանա Եղիազարյանին (հեռ. 011526518, email: lyeghiazaryan@minenergy.am) և իրավական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Աննա Ավագյանին (հեռ. 011526518, email: aavagyan@minenergy.am):
2. Նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ռիմա Եգանյանին՝ ապահովել Նախարարության կայքէջում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձանց տվյալների տեղադրումը:
3. Նախարարության աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Հարություն Մելիքյանին՝ ապահովել պաշտոնական կայքի տեխնիկական սպասարկման աշխատանքների կազմակերպումը:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ